ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«02» 05 2022թ. ՆՄՈ/317-2022

ք. Արմավիր

«ԶԱՐԻՇԱՏ (ԱՐԱՄ) ՄԱՐՏԻՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N ՄՈ/128-2020 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «է» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N129-Ն որոշման N1 հավելվածի 7-րդ և 8-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 24-ի N1791-Ա հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետը, 2019 թվականի սեպտեմբերի 9-ի N2469-Ա հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը, 2-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի հոկտեմբերի 15-ի N01/6.1/06045-2019 գրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի 2022 թվականի մայիսի 2-ի զեկուցագիրը.

որոշում եմ՝

1. 2022 թվականի մայիսի 2-ից «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վնասվածքաբանական բաժանմունքի վարիչ Վահան Հարությունյանին՝ մինչև վեց ամիս ժամկետով:
2. «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վահան Հարությունյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել 510000 (հինգ հարյուր տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Յուրաքանչյուր ամսվա լրավճար սահմանել տվյալ ամսվա վճարովի ծառայություններից ստացված դրամական ընդհանուր մուտքերի 1 տոկոսի չափով, եթե վճարովի ծառայություններից ստացված ընդհանուր մուտքերի մասով արձանագրվել է 15 տոկոսի աճ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի ապրիլի 1-ի ««Արմավիրի Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի փետրվարի 13-ի ՆՄՈ/39-2020 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՆՄՈ/128-2020 որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Недействительная подпись

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

VERIFIED OCSP 5/2/2022 12:52:26 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001030505